

«Օրանժ Արմենիա» ՓԲԸ

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

*2012 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն.....	1
Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն.....	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն.....	3
Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն.....	4
Ծանոթագրություն.....	5

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետերերին և Տնօրենների խորհրդին

Կից ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, որոնք քաղված են 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար «Օրանժ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից: Մենք 2013թ. ապրիլի 23-ին տվել ենք դրական աուդիտորական եզրակացություն այն ֆինանսական հաշվետվությունների մասին, որոնցից քաղվել են կից ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կողմից պահանջվող Ընկերության՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների բոլոր բացահայտումները: Այդ իսկ պատճառով, ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն փոխարինում Ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ամփոփ ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է «Ամփոփ Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ուղղությամբ աշխատանքներ» Աուդիտի միջազգային ստանդարտին (ՍՍՍ 810) համապատասխան իրականացրած ընթացակարգերի հիման վրա ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացության արտահայտումը:

Եզրակացություն

Մեր կարծիքով, 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար Ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստված ֆինանսական հաշվետվություններին:

«Էրնսթ և Կ Կ» ՓԲԸ

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝

Օլեյա Մելնիկ

Գլխավոր տնօրեն՝ Մ Ալեքսանդրյան՝ ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի (գործող 2011թ.-ի սեպտեմբերի 1-ին տրված լիազորագրի հիման վրա)



Էրիկ Հայրապետյան

2013 թ. ապրիլի 23

**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն
2012 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

(հազար ՀՀ դրամ)

	2012թ.	2011թ.
Հասույթ	20,224,919	13,984,810
Այլ գործառնական եկամուտներ	600,506	928,346
Վաճառված սարքավորումների ինքնարժեք	(3,409,286)	(2,374,153)
Փոխկապակցման և միջազգային կապուղիների վարձավճար	(3,825,910)	(3,697,572)
Աշխատավարձեր, պարգևավճարներ և աշխատավարձի հետ կապված հարկեր	(2,647,573)	(2,133,835)
Գույքի սպասարկման ծախսեր	(1,738,945)	(1,580,449)
Գովազդային և ապրանքանիշի ծախսեր	(2,071,917)	(2,572,923)
Տեղեկատվական տեխնոլոգիայի և ցանցային սպասարկման ծախսեր	(2,016,303)	(2,285,950)
Ինտերակտիվ ծառայությունների գծով ծախսեր	(95,137)	(75,259)
Միջնորդավճարներ և բաշխման ծախսեր	(2,104,746)	(1,922,662)
Գործուղման ծախսեր	(207,947)	(220,251)
Վերապատրաստման ծախսեր	(105,254)	(231,366)
Խորհրդատվական ծառայություններ	(468,731)	(558,948)
Ռադիոհաճախականությունների վճար	(1,596,000)	(1,596,543)
Մաշվածություն և ամորտիզացիա	(3,779,528)	(6,759,855)
Հիմնական միջոցների արժեզրկում	-	(43,155,405)
Այլ գործառնական ծախսեր	(2,143,787)	(1,920,095)
Գործառնական վնաս	(5,385,639)	(56,172,110)
Ֆինանսական եկամուտ	15,471	10,411
Ֆինանսական ծախսեր	(1,179,581)	(2,500,201)
Արտարժույթային գործառնություններից վնաս	(2,048,855)	(3,674,986)
Վնաս մինչև շահութահարկ	(8,598,604)	(62,336,886)
Շահութահարկի գծով ծախս	-	-
Տարվա զուտ վնաս	(8,598,604)	(62,336,886)

**Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել և հավանության են արժանացել տպագրության
ղեկավարության կողմից:**

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Ֆրանսիս Ժելիբոեր

Արմինե Երեմյան

2013թ. ապրիլի 23

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն**2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ***(հազար ՀՀ դրամ)*

	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>
ԱԿՏԻՎՆԵՐ		
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	23,374,275	20,480,334
Ոչ նյութական ակտիվներ	10,278,741	10,295,189
Հետաձգված հարկային ակտիվներ	-	-
Կանխավճարված ծախսեր, ոչ ընթացիկ	7,171	235,187
Շահութահարկի գծով կանխավճար	325,000	170,000
Դեբիտորական պարտք ԱԱՀ-ի գծով, ոչ ընթացիկ	4,069,588	6,324,690
	38,054,775	37,505,400
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	611,924	613,123
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,712,286	1,303,048
Դեբիտորական պարտք ԱԱՀ-ի գծով	5,964,027	4,361,770
Կանխավճարներ	829,770	514,246
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	669,414	331,584
	10,787,421	7,123,771
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ	48,842,196	44,629,171
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Կանոնադրական կապիտալ	32,684,860	50,610,220
Կուտակված վնաս	(8,598,450)	(89,084,406)
	24,086,410	(38,474,186)
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Երկարաժամկետ պարտավորություններ ֆինանսական վարձակալության գծով	3,000	15,005
Ապամոնետաժման ծախսերի գծով պահուստ	890,489	830,910
	893,489	845,915
Ընթացիկ պարտավորություններ		
Կարճաժամկետ փոխառություններ	14,270,226	72,932,451
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7,047,161	7,496,260
Ստացված կանխավճարներ	1,920,468	1,109,338
Կրեդիտորական պարտքեր հարկերի գծով	624,442	719,393
	23,862,297	82,257,442
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	48,842,196	44,629,171

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն

2012 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	<i>Բաժնետոմսերի քանակ</i>	<i>Բաժնետոմսերի անվանական արժեք, ՀՀ դրամ</i>	<i>Կանոնադրական կապիտալ</i>	<i>Կուտակված վնաս</i>	<i>Ընդամենը կապիտալ</i>
2011թ. հունվարի 1	50,610,220	1,000.000	50,610,220	(26,747,520)	23,862,700
Հաշվետու տարվա վնաս	-	-	-	(62,336,886)	(62,336,886)
2011թ. դեկտեմբերի 31	50,610,220	1,000.000	50,610,220	(89,084,406)	(38,474,186)
Բաժնետոմսերի թողարկում	71,159,200	1,000.000	71,159,200	-	71,159,200
Կուտակված վնասի մարումը	-	-	-	-	-
Կանոնադրական կապիտալի հաշվին	-	(731.584)	(89,084,560)	89,084,560	-
Հաշվետու տարվա վնաս	-	-	-	(8,598,604)	(8,598,604)
2012թ. դեկտեմբերի 31	121,769,420	268.416	32,684,860	(8,598,450)	24,086,410

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն**2012 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար***(հազար ՀՀ դրամ)*

	<i>2012թ.</i>	<i>2011թ.</i>
Գործառնական գործունեություն		
Վնաս մինչև շահութահարկը	(8,598,604)	(62,336,886)
Ճշգրտումներ մինչև շահութահարկը վնասը գուտ դրամական հոսքերին համաձայնեցնելու նպատակով		
Արժեզրկումից կորուստներ	-	43,155,405
Մաշվածություն և ամորտիզացիա	3,779,528	6,759,855
Հիմնական միջոցների օտարումից (օգուտ) / վնաս	(4,350)	35,084
Պաշարների արժեքի նվազում / (ավելացում) մինչև գուտ իրացման արժեքը	18,105	(7,724)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից վնաս	2,048,855	3,674,985
Տոկոսային ծախսեր	1,179,581	2,500,201
Անհուսալի պարտքերի գծով պահուստ	310,772	299,207
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունը	(1,266,113)	(5,919,873)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի (ավելացում) / նվազեցում	(1,720,012)	524,466
Կանխավճարների ավելացում	(87,507)	(143,535)
Պաշարների ավելացում	(16,906)	(51,914)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի նվազեցում	(527,511)	(3,975,733)
Ստացված կանխավճարների ավելացում / (նվազեցում)	811,129	(122,108)
ԱԱՀ-ի գծով դեբիտորական պարտքերի նվազեցում / (ավելացում)	652,845	(486,460)
Հարկերի գծով կրեդիտորական պարտքերի նվազեցում, շահութահարկից բացի	(94,951)	(1,640,699)
Զուտ դրամական հոսքեր օգտագործված գործառնական գործունեության համար մինչև շահութահարկի վճարումը	(2,249,026)	(11,815,856)
Վճարված շահութահարկ	(155,000)	(80,000)
Զուտ դրամական հոսքեր օգտագործված գործառնական գործունեության համար	(2,404,026)	(11,895,856)
Ներդրումային գործունեություն		
Հիմնական միջոցների և կառուցման ընթացքում գտնվող ակտիվների ձեռքբերում	(5,296,492)	(7,356,355)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,474,135)	(2,324,673)
Հիմնական միջոցների օտարումից մուտքեր	42,429	105,625
Զուտ դրամական հոսքեր օգտագործված ներդրումային գործունեության համար	(6,728,198)	(9,575,403)
Ֆինանսական գործունեություն		
Բաժնետոմսերի թողարկում	71,159,200	-
Վճարված տոկոսներ	(1,043,907)	(2,314,978)
Մուտքեր կարճաժամկետ փոխառություններից	40,314,270	57,552,584
Կարճաժամկետ փոխառությունների մարում	(100,999,956)	(34,800,426)
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	9,429,607	20,437,180
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	40,447	173,272
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ ավելացում / (նվազեցում)	337,830	(860,807)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում	331,584	1,192,391
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում	669,414	331,584

Ծանոթագրություն

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ «Օրանժ Արմենիա» ՓԲԸ պետք է հրապարակի իր ֆինանսական հաշվետվությունները:

Ուղեկցող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք բաղկացած են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունից, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունից, սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունից և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունից, ստացվում են կազմակերպության աուդիտի ենթարկված և 2013թ. ապրիլի 23-ին ստորագրված ֆինանսական հաշվետվություններից 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար:

Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը կարելի է ստանալ Ընկերության ղեկավարությունից՝ ըստ պահանջի: